Ը· ՏԱՐԻ 2375 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 15 ԲԱՂՈՑ 4384 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1891 3 ՃԷՄԱԶԻԷԼ ԱԽԸՐ 1309 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌ولك
غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ԴԵԿՏ. 23|4 ՅՈՒՆՎ. 1891

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ՊԱԼՔԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

Մինչ նախարարական նոր տագնապ մը միտքերը կը զբաղեցնէ ի Ռումանիա, նախարարապետ և Ներքին գործոց նախարար Պ. Լասքար Քաթարճի, յանկարծ բուռն քննադատութիւն հրաւիրեց իր վրայ։ Իբր մէկ տարի յառաջ, Մատիժէնքօ անուն Ռուսէն մը ձերբակալուած էր ի Ռումանիա քաղաքական կասկածով մը, և Սիպերիա փոխադրուելու հրաման եղած էր, երբ Ռումանիա ապաստանեցաւ։ Զայս լսելով, Պուքրէշի դեսպան Պ. Ֆոնթոն անոր յանձնումը պահանջեց, և Պ. Քաթարճի հաւանեցաւ։ Եւ ահա նոյն իսկ նախարարական թերթեր Պ. Քաթարճիի դէմ կը գրեն։

* *

Պուլկար կառավարութիւնը կը խորհի դատի ենթարկել զՏիկին Քարավէլով, որոյ այրն, երբեմն նախարարապետ Պուլկարիոյ, քնն ամիսէ հետէ բանտարկեալ է, Պէլչեվի ծանօթ գործին առթիւ։ Պուլկար կառավարութիւնը կ՚ամբաստանէ զՏիկին Քարավէլով թէ բանտարկելոց ծանուցեալ խնդրոյն առթիւ իր խմբագրած հանրագրին տակ ուրիշ կիներու ստորագրութիւնները կեղծած է։

